ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հուլիսի 2022 թվականի №---Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի №439Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 78-րդ կետը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ՊՐՈՄ ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի հուլիսի 8-ի և հուլիսի 15-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնմեկ ամիս ժամկետով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 30-ի «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Պրոմ Սինթեզ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №439Ա որոշմամբ «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և 2020 թվականի նոյեմբերի 18-ի «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ԼԷ №629 լիցենզան վերաձևակերպելու մասին» №411Ա որոշմամբ «ՊՐՈՄ ՍԱՆ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ վերաձևակերպված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0629 լիցենզիայով ամրագրված «Պրոմ Սինթեզ» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը, որոշման մեջ «մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը» բառերը փոխարինելով «մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը» բառերով, իսկ «մինչև 2040 թվականի դեկտեմբերի 1-ը» բառերը՝ «մինչև 2041 թվականի նոյեմբերի 1-ը» բառերով:

2. «ՊՐՈՄ ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ №0629 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Պրոն Սինթեզ» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հունվարի 15-ի №652-259 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված ԲԲԵՆ21/04-01 երաշխիքի համաձայն երաշխավորված 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը գործողության ժամկետով:

3. «ՊՐՈՄ ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն

օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը.

2) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 15-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի 3–րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «5Մ» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը 2022 թվականի նոյեմբերի 1-ից հետո ուժի մեջ մտնելու դեպքում կկիրառվի այլ սակագնային կարգավորում:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի օգոստոսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հուլիսի 2022թ.